ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾԸ ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ.

Հայաստանում կրկին սկսուեց դժբախտ տաճկահայերի կոտորածը, կրկին մեր մայրերի, քոյրերի ու եղբայրների աղաղակն երկինք է բարձրանում և այս անգամ տաճիկ կառավարութեան վերջին դատաստանն են հայցում Տիրոջից։ Զանազան տեղերից դիմում են Ազգիս վշտացեալ Վեհափառ Կաթուղիկոսին, խնդրելով շուտափոյթ օգնութիւն զսպել տալու խորտակուող տաճիկ կառավարութեան գազանային հակումները և վերջ տալ հաղարաւոր անմեղների արիւնը թափելու։

Վեհափառ Կաթուղիկոսն իսկոյն արձագանք տուեց այդ դիմումներին և իւր կողմից հեռագրական պաշտօնական դիմումներ արաւ Կովկասի փոխարքայ կոմս Վարանցով-Դաշկովին, Ռուսաց արտաքին գործոց նախարար Սազոնովին, Իտալիայի թագաւոր Վիկտոր Էմմանուէլ III-ին, Անգլիայի թագաւոր Գէորգ V-ին, Ֆրանսիայի հանրապետութեան նախագահ Պուանկարէին, Ամերիկայի Միացեալ նահանգների հանրապետութեան նախագահ Վիլսոնին։ Միւս կողմից միաժամանակ հեռագրում է իւր լիազօր Պօղոս փաշայ Նուբարին, առաջարկելով մեկնել Եւրոպա և անձամբ կարևոր անձանց հետ տեսնուելով իւր կողմից պաշտպանութիւն խնդրել Թրքահայ դժբախտ զաւակների համար։ Ահա այդ դիմումներն, որ բերում ենք այստեղ։

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ

I

Էջմիածին, 7 ապրիլի

Նորին Կայսերական Մեծութեան Տ. Փոխարքայ կոմս Իլլարիոն Իվանովիչ Վարանցով-Դաշկովին:

Խորապէս ճնշուած Տաճկաստանի խաղաղ հայերի կոտորածի սոսկալի լուրերով, որի մասին զեկուցել են Ձերդ

Պայծառափայլութեան հայ հասարակական գործիչները, յարգանքով խնդրում եմ Ձեր հեղինակաւոր միջամտութիւնն ու միջնորդութիւնը կառավարութեան առաջ՝ ձեռք առնելու բոլոր մասչելի միջոցներն անմեղ կոտորուող քրիստոնեաների պաշտպանութեան համար։ Միաժամանակ դիմում եմ Արտաքին Գործոց Նախարար Սազոնովին, չեզոք պետութիւններին՝ Ամերիկային և Իտալիային։

ԳԷՈՐԳ Ե.
Ծայրագոյն Պատրիարք
Կաթուղիկոս ամենայն Հայոց

Ա

Էջմիածին, 7 ապրիլի

Նորին Բարձր Գերազանցութիւն Արտաքին Գործերի Նախարար
Սերգէյ Դիմիտրիեվիչ Սազոնովին
Պետրոգրադ.

Ստացուած տեղեկութեան համաձայն, որ հաստատւում է և այլ աղբիւրներից, տեղի է ունենում անպաշտպան և անզէն հայերի կոտորած Էրզրումում, Դերջանում, Զէյթունում և շրջակայքում, արիւնահեղ ընդհարումներ Բիթլիսում, Վանում, Մուշում, բռնութիւններ, թալաններ, սպանութիւններ Ակնում, Կիլիկիայում։ Տնտեսական քայքայումն ամբողջ հայ ժողովրդի։ Իմ հօտը յուզւում է։ Թախանձանօք խնդրում եմ Ձեր Բարձր Գերազանցութիւնից՝ չը մերժել ցոյց տալ այժմ ևս մարդասէր պաշտպանութիւն և հովանաւորութիւն իմ ժողովրդին՝ այս կրիտիքական րոպէում՝ փրկելու, Կայսերական կառավարութիւնից կախուած բոլոր միջոցներով, անմեղ ոչնչացող քրիստոնեաներին։ Զարհուրած հոգեմաշ լուրերով՝ միաժամանակ դիմում եմ հեռագրով չէզոք պետութիւններին՝ Միացեալ Պետութիւնների նախագահին և Իտալիայի թագաւորին, խնդրելով կոտորուող խաղաղ ազգաբնակութեան

պաշտպանութեան մասին։ Ցարդանքով խնդրում եմ, եթէ հնարաւոր կդտնէք, բարեհաճէք յանձնել Ձեր դեսպաններին յիշեալ պետութիւնների մէջ՝ ազդելու, յանուն քրիստոնէութեան և մարդասիրութեան, վերջինների կառավարութիւնների վրայ, որպէսզի դադարեցուցեն հայերի կոտորածները և անկարգութիւնները Թիւրքաց Հայաստանում։

ԳԷՈՐԳ Ե.
Ծայրագոյն Պատրիարք
Կաթուղիկոս ամենայն Հայոց

III

Էջմիածին, 7 ապրիլի

Նորին Մեծութիւն Վիկտոր Էմմանուէլ III-ին
Թագաւորին Իտալիայի

Հռոմ.

Ձերդ Մեծութիւն,

Խորապէս յուզուած այն վրդովեցուցիչ լուրերով, որոնք հաստատում են հայ ժողովրդի դէմ գործադրուող կոտորածների և սիստեմատիկ ճնշումների վերսկսումը Տաճկահայաստանում, ես ինձ թոյլ եմ տալիս կոչ անել Ձեր Մեծութեան բարձր մարդասիրական զգացումներին, ինչպէս և Իտալական ազգի ազնիւ զգացումներին, և խնդրում եմ յարգանքով, շնորհել, յանուն քրիստոնէական հաւատի և մարդկութեան, Թիւրքիայում Ձեր դիպլոմատիական ներկայացուցիչների ազդեցիկ միջամտութեամբ, հզօր պաշտպանութիւն ամենահին քրիստոնեայ մի ժողովրդի, հալածուած անգթօրէն և թողնուած Թիւրք ֆանատիկոսութեան կատաղութեան։

ԳԷՈՐԳ Ե.
Ծայրագոյն Պատրիարք
Կաթուղիկոս ամենայն Հայոց

VI

Էջմիածին, 7 ապրիլի

Պարոն Նախագահին
Ամերիկայի Միացեալ Նահանգների
Վաշինգտոն։

Պարոն Նախագահ,

Համաձայն այն յուզիչ տեղեկութիւնների, որոնք նորերս ստացուել են Տաճկա-Հայաստանից, այդտեղ կազմակերպուած ճնշումները և վերսկսուած կոտորածներն սպառնում են հայ ժողովրդի գոյութեան։ Ներկայ այնչափ ծանր րոպէին Ձեր Գերազանցութեան, ինչպէս և ամերիկական մեծ ազգի բարձր զգացմանց է որ ես կոչ եմ անում, յանուն մարդկութեան և մեր սուրբ քրիստոնեայ հաւատի։ Յարգանքով խնդրում եմ շնորհել Մեծ Հանրապետութեան դիպլոմատիական ներկայացուցիչների անմիջական միջամտութեամբ՝ Ձեր հզօր պաշտպանութիւնը իմ ժողովրդին Տաճկաստանում՝ թողնուած թիւրքական ֆանատիկոսութեան կատաղութեան։

ԳԷՈՐԳ Ե.
Ծայրագոյն Պատրիարք
Կաթուղիկոս ամենայն Հայոց

V

Էջմիածին, 7 ապրիլի

Պարոն Նախագահին
Ֆրանսիական Հանրապետութեան
Պարիզ.

Պարոն Նախագահ,

Թիւրքաց Հայաստանից ստացուած յուզիչ տեղեկութիւնները հաստատում են, որ այդտեղ կազմակերպուած են անմեղ, խաղաղ հայ ժողովրդի կոտորած և հարստահարութիւններ։ Այդպիսի մի ծանր րոպէին, ես Ձեր Գերազանցութեան, ինչպէս և ֆրանսիական մեծ ազգի ազնիւ զգացումներին եմ անում իմ կոչը, յանուն մարդկութեան և քրիստոնէական հաւատի, չինայել Հանրապետութեան

կառավարութիւնից կախեալ բոլոր միջոցների գործադրութեամբ փրկելու անմեղ կոտորուող քրիստոնեաներին։ Ցարդանքով խնդրում եմ բարեհաճել, եթէ հնար կը գտնէք, յանձնարարել Ձեր դեսպաններին չէզոք պետութիւնների՝ Իտալիայի և Ամերիկայի Միացեալ Պետութիւնների՝ մօտ ազդեցութիւն գործել յանուն մարդասիրութեան այն նպատակով, որ վերջ դրուի հայ ժողովրդի կոտորածին Թիւրքիայում, ուր նա մատնուած է Թիւրք ֆանատիկոսութեան կատաղութեան։

ԳԷՈՐԳ Ե.
Ծայրագոյն Պատրիարք
Կաթուղիկոս ամենայն Հայոց

VI

Էջմիածին, 7 ապրիլի

Նորին Մեծութիւն
Թագաւորին Անգլիայի Գէորգ V-ի
Լոնդոն.

Ձերդ Մեծութիւն,

Համաձայն Թիւրքաց Հայաստանից վերջերս ստացուած տեղեկութիւնների, այնտեղ կատարւում է կոտորած հայ ժողովրդի և գործադրւում են բռնութիւններ նրա դէմ։ Ընկճուած այդ հոգեցունց լուրերով, ես դիմում եմ Ձեր Մեծութեան, ինչպէս և ամբողջ Բրիտանական ազգի ազնիւ զգացումներին և կոչ եմ անում յանուն մարդկութեան և քրիստոնէական հաւատի, չխնայել Ձեր Մեծութեան կառավարութիւնից կախեալ բոլոր միջոցները գործադրել՝ փրկելու անմեղ կոտորուող քրիստոնեաներին։ Թախանձագին խնդրում եմ բարեհաճել, եթէ հնարաւոր գտնէք, յանձնարարէք չէզոք պետութիւնների մօտ Ձեր դեսպաններին՝ ազդել յանուն մարդասիրութեան նրանց կառավարութիւնների վրայ, որպէս զի կանգնեցնեն կոտորածը և փրկեն հայ ժողովուրդը Թիւրքիայում, մատնուած Թիւրք ֆանատիկոսութեան կատաղութեան։

ԳԷՈՐԳ Ե.
Ծայրագոյն Պատրիարք
Կաթուղիկոս ամենայն Հայոց

VII

Էջմիածին, 7 ապրիլի

Նորին Գերազանցութիւն
Պօղոս-փաշա Նուպարին
Կահիրէ.

Սոֆիայից և այլ աղբիւրներից ստացուած տեղեկութիւնները հաստատում են, որ վերսկսուել են կոտորածներ Էրզրումում, Դերջանում և Զէյթունում, տեղի են ունենում արիւնահեղ խռովութիւններ Բիթլիսում, Վանում, Մուշում և կատարւում են ոճրագործութիւններ, բռնութիւններ Ակնում, Կիլիկիայում։ Ընդհանուր տնտեսական քայքայումն։ Ես դիմել եմ ռուսաց արտաքին գործերի մինիստրին, նախագահ Վիլսոնին, Իտալիայի թագաւորին, հայցելով նրանց միջամտութիւնը, իբրև չէզոք պետութիւնների։ Խնդրում եմ Ձեզ հաճեցէք իբրև իմ ներկայացուցիչ և նախագահ Հայկական պատգամաւորութեան ամեն հնարաւորը գործ դնել ի պաշտպանութիւն մեր ժողովրդի Թիւրքիայում։ Հեռագրեցէք։

ԳԷՈՐԳ Ե.
Ծայրագոյն Պատրիարք
Կաթուղիկոս ամենայն Հայոց

ՍՏԱՑՈՒԱԾ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

I

Պետրոգրադ, 9 ապրիլի

Նորին Սրբութիւն
Կաթուղիկոսին ամենայն Հայոց
Էջմիածին

Ի պատասխան Ձեր հեռագրին ապրիլի 7-ից, շտապում եմ տեղեկացնել Ձեր Սրբութեան, որ ես առաջարկել եմ մեր դեսպաններին՝ Իտալիայում և Միացեալ Նահանգներում՝ պաշտպանել Ձեր դիմումը։

Սազոնով

II

Անգլիայի Արտաքին Գործոց Նախարար
Գրէյի հեռագիրը.

Լոնդոն 30 ապրիլի/13 մայիսի

Նորին Սրբութիւն Ծայրագոյն Պատրիարք եւ
Կաթուղիկոս ամենայն Հայոց
Էջմիածին

Նորին Մեծութիւն Թագաւորը հրամայել է ինձ տեղեկացնել Ձերդ Սրբութեան սոյն ամսուայ 7-ի հեռագրի ստացումը և յայտնել, որ Տաճկաստանի հայերի դրութիւնը զբաւել է Նորին Մեծութեան կառավարութեան ուշադրութիւնը։

Գրէյ

III

Թիֆլիս, 16 ապրիլի

Նորին Սրբութիւն Ծայրագոյն Պատրիարքի
եւ Կաթուղիկոսի ամենայն Հայոց
Էջմիածին.

Ձերդ Սրբութիւն,

Ի հետեւումն Ձեր 7 ապրիլի հեռագրի, պատիւ ունեմ տեղեկացնել Ձեր Սրբութեան, որ, ըստ հաղորդագրութեան արտաքին գործերի մինիստրի, նա հրամանագրել է մեր դիպլոմատիական ներկայացուցիչներին Վաշինգտոնում և Հռոմում՝ պաշտպանել Ձեր դիմումը Միացեալ Պետութիւնների և Իտալիայի կառավարութիւններին՝ ընդունելու համար միջոցներ ի պաշտպանութիւն թիւրքաց հայերի։

Ցանձնելով ինձ Ձեր հովուապետական աղօթքներին, խորին յարգանքի և լիակատար անձնուիրութեան զգացումներով, պատիւ ունեմ լինել Ձեր Սրբութեան

Ամենախոնարհ ծառայ՝

Կոմս Վարանցով-Դաշկով

Վեհափառ Հայրապետը նախ քան այս հեռագիրներն ուղարկելը և կոտորածի լուրերն առնելը՝ Պօղոս փաշային ապրիլի 5-ին հեռագրել է Կահիրէ, որ ազգային շահերի պաշտպանութեան և իւր առաքելութիւնը (միսսիան) շարունակելու համար, անհրաժեշտ է իւր շուտափոյթ ներկայութիւնը Լօնդոնում և Փարիզում և առաջարկում է մեկնել շուտով Եւրոպա։ Պօղոս փաշան յայտնելով իւր պատրաստակամութիւնը՝ մեկնել է Փարիզ, որտեղ գտնւում է այժմ։

ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՁԱՅՆԸ.

Արդէն պարբերական մամուլը լի է տեղեկութիւններով, որ Վանը պաշարուած է տաճիկ զօրքերի կողմից, իսկ շրջակայ գիւղերը մատնուած կոտորածի ու թալանի սկսուած ապրիլի 6-ից։ Այդ կոտորածների թիւն, ըստ որոշ աղբիւրների, հասնում է 5—6000։

Մայիսի 6-ին Վեհափառ Կաթուղիկոսն ստացել է Լիմ Անապատից հետևեալ սրտաճմլիկ գրաւոր տեղեկութիւնները, որ բերում ենք այստեղ։

Գլխաւոր եւ Վեհափառ Տէր։

Ձայն գուժի, Ձայն ողբի և աղաղակի տարաբախտ որդիքդ Ազգանազեան զարմի ամէնքը մէկ հարուածով յարմատէ կոտորեցան, աւերակ ամայացեալ անապատացեալ երկիրը կուլայ և կը-խնդրէ իր կորսուած որդիները ու չկրնար գտնել, զի այլ ևս չկան։

Հինգ տարեկան մանուկէն մինչև հարիւրամեայ ծերունին սրախողխող եղան, հարսունք և կուսանք միահամուռ գերուեցան, գիւղ և դաշտ, լեռ ու ձորը, նկուղ ու հորը լիք են հայոց դիակներով, գայլեր ու գազաններ յագեցան՝ գոհացան հայոց արիւնով, գետեր և աղբիւրները կարմիր փոխուած են, սակայն տակաւին մարդ գազան թիւրք կառավարութիւնը չգոհանար, չյագենար, դեռ կփնտռէ՝ դեռ կորոնէ՝ նկուղներէն՝ ձոր ու փոսերէն աղուէսներու պէս դուրս կը հանէ ու կխողխողէ։